ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ՇԻԼԼԷՐԻ

Թարգմ. Զ. ԲԱԼՈՒՂԵԱՆԻ

«Առէք աշխարհը, դուք էք տէրը այսօրից»,
Գոչեց Զևսը մարդկանց ցեղին երկընքից –
«Թող դա լինի ձեր ստացուածքը սեփական,
«Եղբայրաբար բաժանեցէք միմիայն»։
Եւ բոլորը ոտքի ելան ըշտապով,
Ամեն մէկը իր բաժինը ջոկելով,
Երկրագործը դաշտի բերքը ժողովեց,
Որսորդն ընկաւ խեղճ երէի յետևից...
Վաճառականն լրցրեց պահեստն ահագին,
Աբբան ընտրեց ազնըւագոյն հին գինին,
Թագաւորը կըտրեց կամուրջն ու ճամբէն,
Պահանջելով, որ տասանորդ վըճարեն...
Անց էր կացել շատ ժամանակ այդ օրից,
Երբ Պոէտը եկաւ հեռու տեղերից.
Սակայն Նորան մի «ծեղ» անգամ չը տըւին,
Որովհետև տէր կար ամեն մի «ծեղին»։
«Վայ ինձ, ուրեմն ես եմ միայն զըրկըւած,
«Ե՞ս, քո որդին հաւատարիմն ու սիրած»—
Այսպէս բարձրը գանգատուեց նա Զևէսին,
Մունկ չոքելով Նորա գահի առաջին։
«Դու ուշացար ցընորքների աշխարհում,

Ասաց Զեւսը—«Էլ ինչո՞ւ ես տրտընջում,
«Ո՞ւր էիր, երբ կատարուեցաւ բաժանումն։
«Քո մօտն էի»—պատասխանեց նա տրտում—
«Իմ հայեացքը բեեռուած էր քո դէմքին,
«Ուշքըս—երկնից այն ներդաշնակ օրհներգին.
«Ներիր ինձ, հայր, յափըշտակուած քո լոյսից,
«Ես զըրկուեցայ իմ երկրային բաժինից...»։
«Դէ ինչ անեմ—ասաց Զեւսը Պոէտին—
«Չի պատկանում ինձ այլ եւս այդ աշխար...
«Թէ ուզում ես, արի, ապրենք միասին,
«Իմ երկինքը միշտ պատրաստ է քեզ համար»։